



Protection of Rights
Without Borders NGO



2022

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՎԵՃԵՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ
ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐ

Քաղաքականության համառոտագիր



ԵՄ-Ի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՄՍՄԻ
EUROPEAN UNION FOR ARMENIA



Սույն փաստաթուղթը կազմվել է «ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների. Հայաստանում քաղաքացիական ձայնի և դերի հզորացում՝ հանուն աշխատանքային իրավունքների և սոցիալական պաշտպանության» ծրագրի (Ծրագրի) շրջանակներում իրականացված մշտադիտարկման արդյունքների վրա: Ծրագիրն իրականացվում է «ՕքսեՋեն» հիմնադրամի, «Սոցիոսկոպ» ՀԿ-ի, «Ասպարեզ» լրագրողների ակումբ ՀԿ-ի, «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի կողմից՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի և «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Աշխատանքային իրավունքների պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ դատական պաշտպանության միջոցով, ՀՀ կառավարության առաջնահերթություններից է: Աշխատանքային իրավունքի ապահովումը տարիներ շարունակ խնդրահարույց է ՀՀ-ում, ուստի կարևոր է ապահովել աշխատանքային իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների, այդ թվում՝ դատարանի հասանելիությունը:

Չնայած գործող օրենսդրական երաշխիքների, ներկայումս աշխատանքային վեճերով դատական պաշտպանության մատչելիության առումով արձանագրվում են խնդիրներ, այդ թվում՝ աշխատանքային վեճերով հայցվորներից պետական տուրքի գանձում, հատկապես ՀՀ վարչական դատարանում, հիմնական և ածանցյալ պահանջների որակման և դրանց համար պետական տուրքի հաշվարկման հարցում: Աշխատանքային վեճերով նույն պահանջներին վերաբերող գործերով պետական տուրքի բռնագանձման մասով միանման մոտեցում չի ցուցաբերում ինչպես նույն՝ ընդհանուր իրավասության դատարանը տարբեր դատական կազմերի պարագայում, այնպես էլ առկա է տարբերություն՝ ընդհանուր իրավասության և վարչական դատարանների միջև՝ համանման պահանջների մասով:

2021 թվականին «Իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների» հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից իրականացվել է աշխատանքային հարաբերություններին վերաբերող վարչական և քաղաքացիական դատական գործերի մշտադիտարկում: Մշտադիտարկման շրջանակներում դիտարկվել է աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ 496 գործ, որոնցով կայացվել է վճիռ (384 քաղաքացիական և 112 վարչական գործեր), ինչպես նաև 123 կարճման մասին որոշումⁱⁱ:

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ.

- ✓ Աշխատանքային վեճերով որոշ գործերով դատարանները հայցվորից գանձում են պետական տուրք,
- ✓ Հայցվորի՝ պետական տուրքի վճարումից ազատված լինելու դեպքում պատասխանողից այն գանձելու հարցում տարատեսակ մոտեցումներ ընդհանուր իրավասության և վարչական դատարաններում,
- ✓ Աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու պայմաններում անձին նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում աշխատավարձի մինչև 12-ապատիկի չափով հատուցում տրամադրելու պահանջը որպես հիմնական գնահատելը և դրա համար պետական տուրք գանձելը:

Հաշվի առնելով դատական պաշտպանության կարևորությունը և դատարանի հասանելիությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային վեճերով հայցվորն ազատվում է պետական տուրք վճարելուց: Այսպես՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասին առաջին կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով: Աշխատանքային վեճը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն, աշխատողի կամ տվյալ գործատուի հետ նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնված աշխատողի և գործատուի միջև տարաձայնությունն է, որն առաջանում է կամ առաջացել է աշխատանքային օրենսդրությամբ, այլ նորմատիվ

իրավական ակտերով, ներքին իրավական ակտերով, աշխատանքային կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների կատարման ժամանակ:

➤ *Աշխատանքային վեճերով հայցվորից պետական տուրքի գանձումը.*

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ինչպես ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները, այնպես էլ ՀՀ վարչական դատարանն աշխատանքային վեճերով պետական տուրքի գանձման հարցում միանման մոտեցում չեն ցուցաբերում նույն խնդրով և նույնանման պահանջներով բերված գործերով: Նշվածը վերաբերում է ինչպես հայցվորի՝ պետական տուրքի վճարումից ազատված լինելու, վերջինիս ներկայացրած հիմնական ու ածանցյալ պահանջների տարանջատման, այնպես էլ՝ ածանցյալ պահանջների համար գանձվող տուրքի հարցերին: Դիտարկված քաղաքացիական 256 գործերիցⁱⁱⁱ 11-ով (4%) Դատարանը չի համարել, որ հայցվորն օրենքի ուժով ազատված է պետական տուրքը վճարելուց, որոնցից 5 գործը վերաբերել են աշխատանքից ազատելուն, այդ թվում՝ կարգապահական հիմքով, հաստիքի կրճատման, կենսաթոշակային տարիքը լրանալու և էական պայմանների փոփոխությանը չհամաձայնելու հիմքով, 4-ը՝ վերջնահաշվարկ կատարելուն, աշխատավարձի և այլ վճարների բռնագանձմանը, իսկ 2-ը՝ աշխատանքից ազատելու մասին հրամանը տրամադրելուն: Նշված 11 գործից 5-ով հայցը մերժվել է: Վարչական դատարանի կողմից քննած դիտարկված 87^{iv} գործերից 28-ով (32%) դատարանը չի համարել, որ հայցվորն ազատված է պետական տուրքի վճարումից: Նշված 28 գործից 14-ը վերաբերել են հանրային ծառայությունից ազատվելու և նախկին աշխատանքում վերականգնելուն, 8-ը՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների վճարմանը, 3-ը՝ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումը վիճարկելուն և մեկական գործեր՝ առանց համաձայնության այլ պաշտոնի փոխադրելուն, մրցույթի արդյունքներն անվավեր ճանաչելուն, քննության արդյունքում տրված եզրակացության պատճենները տրամադրելուն պարտավորեցնելուն:

Պետք է նշել, որ Վերաքննիչ դատարանը նույնպես միանման մոտեցում չի ցուցաբերել աշխատանքային վեճերով հայցվորից պետական տուրքը գանձելու հարցում: Վերաքննիչ դատարան բողոքարկված գործերից մեկով՝ Վերաքննիչ դատարանը դատական ծախսերը բաշխելու հարցը համարել է լուծված՝ գտնելով, որ վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման, իսկ բողոք բերած անձինք վճարել են պետական տուրքը: Մեկ այլ գործով՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ թեև բողոքաբերը վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրք, մինչդեռ օրենսդրության պահանջների համաձայն՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ուժով ազատված է պետական տուրքի վճարման պարտականությունից, ուստի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ԶԴՕ) 103-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ բողոքաբեր հայցվորին պետք է վերադարձնել վճարված պետական տուրքի գումարը, ավել վճարված լինելու հիմքով, իսկ երրորդ գործով՝ բողոքաբեր հայցվորը վճարել էր պետական տուրքը, իսկ Վերաքննիչ դատարանը գտել էր, որ պետական տուրքի գումարի վճարումից հայցվորն ազատված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ա) կետի հիմքով, ուստի վերաքննիչ բողոքի մերժման պայմաններում այդ հարցը պետք է համարել լուծված^{vii}:

Ոչ միանման մոտեցումներ ընդհանուր իրավասության դատարանը ցուցաբերել է աշխատավարձի և այլ վճարների գանձման վերաբերյալ դիտարկված գործեր (38 գործից 4 (11%) գործով^{viii} չի համարել, որ հայցվորն ազատված է պետական տուրքը վճարելուց): Հատկանշական է, որ նշված գործերից մեկով վերաքննիչ բողոքը քննելիս Վերաքննիչ դատարանը նշել է, որ տվյալ դեպքում՝ նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարը վճարվել է, վերաքննիչ բողոքը բավարարվում է, դատական ակտը բեկանվում և գործն ուղարկվում է նոր քննության, դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում^{ix}:

Ինչպես արդեն նշվեց, ի տարբերություն քաղաքացիական գործերի, վարչական գործերով ՀՀ վարչական դատարանը դիտարկված գործերի զգալի մասում գտել է, որ հայցվորն ազատված չէ պետական տուրքը վճարելուց:

Պետք է նշել, որ Վարչական դատարանը միատեսակ մոտեցում չի ցուցաբերել վերը նշված հիմքերով բերված գործերով հայցվորի՝ պետական տուրքի վճարումից օրենքով ազատված լինելու հարցում: Այսպես, աշխատավարձի կամ այլ վճարների գանձման խնդրով 13 դիտարկված գործերից 8-ով (62%)^x Դատարանը գտել է, որ հայցվորն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրքը վճարելուց: Օրինակ, Պաշտպանության նախարարության (ՊՆ) դեմ ներկայացված շաբաթ օրերին առանց վարձատրվելու աշխատելու վերաբերյալ դիտարկված 6 գործից 2-ով է Դատարանը գտել, որ հայցվորն ըստ օրենքի ազատված է պետական տուրքը վճարելուց, քանի որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով^{xi}, կամ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» ենթակետով հայցադիմում ներկայացնելիս պետական տուրք վճարելու պարտավորություն չի ունեցել, ուստի պետական տուրքի գծով դատական ծախս ևս չի առաջացել^{xii}: Իսկ թիվ ՎԴ1/0079/05/19 գործով^{xiii}, որը ևս վերաբերել է շաբաթ օրերին առանց վարձատրության աշխատելու հարցին, հայցվորը ներկայացրել է պետական տուրքի վճարումից հետաձգելու վերաբերյալ միջնորդություն, որը բավարարվել է Դատարանի կողմից: Նշված գործով հայցը բավարարվել է, և Դատարանը վճռել է, որ դատական ծախսի՝ պետական տուրքի, հատուցման պարտականությունը կրում է ՊՆ-ն, և վերջինիցս հօգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ:

Աշխատանքից ոչ կարգապահական հիմքով ազատման վերաբերյալ դիտարկված 36 գործից 7-ով (19%)^{xiv} Դատարանը գտել է, որ հայցվորն օրենքով ազատված չէ պետական տուրքը վճարելուց: Ոչ միասնական մոտեցում է ցուցաբերել դատարանը նաև միևնույն փաստական հանգամանքներով վարչական գործերը քննելիս: Օրինակ, թիվ ՎԴ/2521/05/19 և թիվ ՎԴ/2518/05/19 գործերով միևնույն փաստական հանգամանքներով վարչական գործերից մեկի դեպքում գանձվել է պետական տուրքի վճարը, իսկ մյուսի դեպքում Դատարանը գտել է, որ հայցվորն ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից: Հատկանշական է, որ նշված 7 գործերից 6-ով հայցը բավարարվել է: Մերժված գործով վճիռը բողոքարկվել է, Վերաքննիչ դատարանը նույնպես չի համարել, որ բողոքաբեր հայցվորն ազատված է պետական տուրքը վճարելու պարտականությունից^{xv}:

Կարգապահական հիմքով աշխատանքից ազատման վերաբերյալ 18 գործերից 7-ով (39%) Դատարանը գտել է, որ հայցվորն ազատված չէ պետական տուրքը վճարելուց^{xvi}։ Կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ դիտարկված 7 գործից 3-ով (43%)^{xvii} Դատարանը չի համարել, որ հայցվորն ըստ օրենքի ազատված է պետական տուրքը վճարելու պարտականությունից։

Ինչպես տեսնում ենք, թե՛ քաղաքացիական և թե՛ վարչական գործերով դատարանները չունեն միասնական պրակտիկա քաղաքացիների՝ աշխատանքային վեճերով պետական տուրքից ազատված լինելու հարցի շուրջ այն դեպքում, երբ օրենքն ուղղակիորեն սահմանում է նման արտոնություն։

Բացի այդ, նկատվել է Դատարանի ոչ միատեսակ պրակտիկան Հայցվորի կողմից պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում այնուամենայնիվ վճարված պետական տուրքը վերադարձման ենթակա լինելու վերաբերյալ դատական ակտերում նշում կատարելու հարցում։ Այդպես, գործերի միայն մի մասում է դատարանը վճռով հստակ նշել, որ թեև Հայցվորի կողմից վճարվել է պետական տուրք, սակայն, նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով հայցվորներն ազատված են դատարաններում պետական տուրքի վճարումից, անհրաժեշտ է վերադարձնել վճարված պետական տուրքը^{xviii}։ Իսկ այլ դեպքերում, թեև Դատարանը նշել է, որ Հայցվորը վճարել է պետական տուրք այն դեպքում, երբ ազատված է եղել նման պարտականությունից, սակայն առանձին նշում չի կատարել վճարված պետական տուրքը վերադարձման ենթակա լինելու վերաբերյալ^{xix}։

➤ *Հայցվորի՝ պետական տուրքի վճարումից ազատված լինելու դեպքում պատասխանողից այն գանձելը.*

Մշտադիտարկումը ցույց է տվել, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը տարբեր մոտեցումներ են ցուցաբերում հայցվորի՝ օրենքի ուժով պետական տուրքը վճարելուց ազատված լինելու դեպքում հայցի բավարարման արդյունքում պատասխանողից պետական տուրքը գանձելու հարցում։

Այդպես, ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործերով հիմնականում ընդգծել է, որ այն դեպքում, երբ հայցվորն օրենքի ուժով ազատված է պետական տուրքի վճարման պարտականությունից, նույն արտոնությունը չի գործում պատասխանողի՝ գործատուի մասով, և գանձել է պետական տուրքը^{xx}։

Ի տարբերություն քաղաքացիական գործերի, վարչական գործերով հայցի բավարարման պարագայում այն դեպքերում, երբ հայցվորն օրենքով ազատված է եղել պետական տուրքը վճարելուց ու չի վճարել այն, վարչական դատարանը որպես կանոն պետական տուրքի գումարը չի գանձել պատասխանողից, գտել է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված ու հղում կատարել Վճարել դատարանի որոշմանը (Տե՛ս ՀՀ վճարել դատարանի 30.11.2018 թվականի թիվ ՎԴ/1115/05/16 որոշումը)^{xxi}։

Այդուամենայնիվ, արձանագրվել են դեպքեր^{xxii}, երբ Վարչական դատարանը նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը բավարարվում է, իսկ հայցվորի կողմից պետական տուրքի գումարը չի վճարվել՝ պետական տուրքի վճարումից ազատված լինելու հանգամանքով պայմանավորված՝ պատասխանողից հոգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Ինչպես երևում է, վարչական դատարանին ընդդատյա գործերով աշխատանքային իրավունքի խախտում թույլ տված գործատուն՝ պետական կամ համայնքային մարմինն ազատվում է պետական տուրքը վճարելուց, ինչը մեղմացնում է խախտում ճանաչող դատական ակտի կանխարգելման ազդեցությունը և ոչ հավասար պայմաններ է ստեղծում մասնավոր գործատուի համար:

➤ *Ածանցյալ պահանջների համար պետական տուրք գանձելը.*

Որոշ գործերով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, որի արդյունքում, պետական տուրքի չափը որոշելիս կիրառել է բռնագանձման ենթակա ողջ գումարի նկատմամբ 2 տոկոսի չափը: Նման դեպքեր արձանագրվել են, օրինակ, աշխատանքից ազատման հրամանը վիճարկելիս հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի բռնագանձման^{xxiii}, նախկին աշխատանքի վերականգնման անհնարինության դեպքում հատուցման և այլ պահանջների մասով: Աշխատանքից ազատման վերաբերյալ բավարարված գործերով դատարանը, բացի պետական տուրքի ոչ գույքային պահանջների համար ֆիքսված գումարից, պատասխանողից բռնագանձել է նաև վճարվելիք հարկադիր պարապուրդի և նախկին աշխատանքի վերականգնման անհնարինության հատուցման, տուժանքի գումարի 2 տոկոսի չափը:

Սակայն այդ հարցում ևս ընդհանուր իրավասության դատարանը միատեսակ մոտեցում չի ցուցաբերել: Այսպես, դատարանը ոչ միանման մոտեցում է ցուցաբերել պատասխանողից պետական տուրքի չափը գանձելու մեխանիզմի հարցում նույնանման փաստական հանգամանքներով երկու գործով /չվճարված աշխատավարձը, վերջնահաշվարկը և դրա նկատմամբ հաշվարկված տուժանքը բռնագանձելու պահանջի վերաբերյալ/: Գործերից մեկով^{xxiv} Դատարանը թեև, ի թիվս այլնի, վճռով պարտավորեցրել է պատասխանողին բռնագանձվող աշխատավարձի և վերջնահաշվարկի նկատմամբ բռնագանձել Աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով հաշվարկվող տուժանքները՝ սկսած կետանցից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, այնուամենայնիվ գտել է, որ պատասխանողից հոգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման ֆիքսված գումար /կոնկրետ դեպքում՝ 7.282.18 ՀՀ դրամ/, այն դեպքում երբ մյուս գործով^{xxv} Դատարանը վճռել է, որ պատասխանողից հոգուտ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման պետական տուրք՝ հոգուտ հայցվորի բռնագանձման ենթակա գումարի 2 տոկոսի չափով:

Հատկանշական է, որ քաղաքացիական որոշ գործերով դատարանը մի քանի պահանջի առկայության դեպքում, այդ թվում՝ աշխատանքից ազատման հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի գումարը բռնագանձելու վերաբերյալ, դրանք դիտարկել է որպես 3 առանձին հիմնական պահանջ, այդ թվում մեկը՝ դրամական՝

պատասխանողից բռնագանձել 8.000 ՀՀ դրամ և բռնագանձվող գումարի 2 տոկոսը^{xxvi} (նման մոտեցումն առավել տարածվածն է), այլ դեպքում հրամանն անվավեր ճանաչելու պահանջը դիտարկել է հիմնական, իսկ վերականգնման պահանջը՝ ածանցյալ, դրանց համար բռնագանձելով 4.000 ՀՀ դրամ, սակայն ներկայացված՝ հարկադիր պարապուրդի բռնագանձման պահանջը կրկին դիտել է որպես հիմնական դրամական պահանջ՝ վճռելով բռնագանձել դրա 2 տոկոսը^{xxvii}, իսկ այլ դեպքում վերականգնման և հարկադիր պարապուրդի բռնագանձման պահանջները դիտել է հրամանն անվավեր ճանաչելու պահանջից ածանցված՝ պատասխանողից բռնագանձելով 4.000 ՀՀ դրամ^{xxviii}:

Թիվ ԵԴ/8476/02/19^{xxix} գործով Վերաքննիչ դատարանն անդրադարձել է ածանցյալ պահանջների համար գանձվող պետական տուրքի հարցին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանը հարկադիր պարապուրդի գումարի բռնագանձման պահանջը որակում է որպես ածանցյալ պահանջ, գտել է, որ ածանցյալ պահանջի մասով պետական տուրք ենթակա չէ վճարման վերաքննիչ բողոքի ներկայացման համար: Ինչ վերաբերում է աշխատանքում չվերականգնելու դիմաց Դատարանի վճռով սահմանված միջին աշխատավարձի մինչև 12-ապատիկի չափով հատուցմանը, ապա այն ածանցյալ պահանջ չէ, որովհետև այն սահմանվում է որպես հատուցում աշխատանքում չվերականգնելու դիմաց, երբ դատական ակտով անհնար է համարվում աշխատանքում վերականգնելը: Հետևաբար, միջին աշխատավարձի 12-ապատիկի նկատմամբ վերաքննիչ բողոքի ներկայացման համար պետք է հաշվարկվի պետական տուրքի գումար՝ «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված չափով և գանձվի բողոքաբերից:

Ածանցյալ պահանջների առկայության դեպքում, այդ թվում՝ հարկադիր պարապուրդի հատուցման, ի տարբերություն քաղաքացիական գործերի, Վարչական դատարանը չի գանձում բռնագանձման ենթակա գումարի 2 տոկոսը:

Վարչական դատարանը աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու, որպես հետևանք հայցվորին նախկին աշխատանքում (պաշտոնում) վերականգնելուն պարտավորեցնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի գումարը բռնագանձելու պահանջները դիտարկում է որպես մեկ հիմնական պահանջ և դրանից ածանցված պահանջներ^{xxx}: Այնուամենայնիվ, արձանագրվել դեպքեր, երբ Վարչական դատարանը նման պահանջները դիտարկել է որպես երեք առանձին հիմնական պահանջներ և գանձել պետական տուրք^{xxxi}:

Փաստորեն, աշխատանքային իրավահարաբերությունների առնչությամբ դատարաններ դիմելիս պետական տուրքի վճարման պրակտիկան միանշանակ չէ, որի արդյունքում պետական տուրքից չազատելու պարագայում երկու կողմն էլ բացասական դրության մեջ կարող են դրվել, մի դեպքում՝ ավել պետական տուրք վճարելու պահանջ կարող է ներկայացվել, մյուս դեպքում՝ պատասխանողից բռնագանձվել նաև որպես հատուցում սահմանված գումարի որոշակի տոկոս կամ գործով պատասխանողը կարող է կրել պետական տուրքի հատուցման բեռը կամ ոչ, կամ կրել այն այս կամ այն չափով՝ կախված նրանից, թե որ դատական կազմում է քննվում գործը:

Բացի այդ, թեև վարչական գործերի պարագայում առկա է առանձնահատկություն՝ հանրային ծառայությանը վերաբերող հարաբերությունների մասով, այնուամենայնիվ թե՛

վարչական գործերով, թե՛ քաղաքացիական գործերով քննվում են անձանց աշխատանքին վերաբերող հարցեր, ուստի անհավասար մոտեցում է ցուցաբերվում վերջիններիս նկատմամբ դատարանի հասանելիության և մատչելիության տեսանկյունից՝ կախված նրանից, թե որ դատարանում է քննվում իրենց աշխատանքային վեճը: Նշված հարցն առավել կարևորվում է՝ հաշվի առնելով նաև 19.04.2021թ.-ին ընդունված «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին օրենքով դատարաններ ներկայացվող հայցադիմումների համար պետական տուրքի չափի անհամաչափ բարձրացումը, ինչն առավել վատ դրության մեջ կարող է դնել վերը նշված անձանց և կոնկրետ դեպքերում սահմանափակել վերջիններիս՝ դատարանի հասանելիության իրավունքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս մասով օրենսդրությունը հստակ է, իսկ արձանագրված խնդիրները առաջանում են դատական պրակտիկայում՝ վերը նշված խնդիրները բացառելու, դատավարության կողմերի արդար դատաքննության, դատարանի հասանելիության և մատչելիության իրավունքը բոլորի համար հավասար կերպով ապահովելու նպատակով առաջարկում ենք.

➤ Ինչպես Ընդհանուր իրավասության դատարանում, այնպես էլ Վարչական դատարանում ապահովել միասնական պրակտիկա աշխատանքային վեճերով հայցվորի՝ պետական տուրք վճարելուց ազատված լինելու հարցում՝ գործնականում ներառելով աշխատանքային վեճ հանդիսացող կամ աշխատանքային վեճից բխող բոլոր հարցերը ՀՀ օրենսդրությանը համահունչ.

➤ Ապահովել միասնական մոտեցում աշխատանքային վեճերով հիմնական և ածանցվող պահանջների գնահատման և դրա հիման վրա պետական տուրքի չափի հաշվարկման հարցում.

➤ Ապահովել միասնական մոտեցում բավարարված հայցերով հայցվորի՝ պետական տուրքը վճարելուց ազատված լինելու դեպքում պատասխանողից պետական տուրքը գանձելու հարցում:

➤ Ինչպես Ընդհանուր իրավասության դատարաններում, այնպես էլ Վարչական դատարանում ապահովել միասնական մոտեցում աշխատանքային գործերով հայցվորների կողմից պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պարագայում այնուամենայնիվ պետական տուրք վճարված լինելու դեպքում դատարանների կողմից դատական ակտերում վճարված պետական տուրքի՝ վերադարձման ենթակա լինելու վերաբերյալ նշում կատարելու հարցում՝ պետական տուրքի վերադարձի գործընթացը դյուրացնելու նպատակով:

ⁱ Տե՛ս, օրինակ, https://www.moj.am/storage/uploads/CEPA-Roadmap_ENG-Draft_June-2018.pdf

ⁱⁱ Ավելի մանրամասն տե՛ս Ջեկույց «Աշխատանքային գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրություն. աշխատանքային իրավունքի խնդիրներ», Երևան, 2022, ԻՊԱՍ, հասանելի է <https://bit.ly/3MeDFeR>

ⁱⁱⁱ Ընդհանուր դիտարկված 384 գործից 114-ը վերաբերել են իրավաբանական ստաժի հաստատմանը, իսկ 14-ը՝ գործատուին պատճառված վնասի հատուցմանը քաղաքացիական իրավական հարաբերությունների համատեքստում:

^{iv} Ընդհանուր թվով դիտարկված 112 գործից 25-ը վերաբերել են կենսաթոշակի նշանակմամբ վերաբերյալ որոշումների վիճարկմանը:

^v ԵՂ/6992/02/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204017841

^{vi} ԱՎՂ3/0803/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=27303072741042959

^{vii} ԿՂ1/1705/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=16325548649303429

^{viii} Նշված 4 գործերով հայցվորը բերել է հետևյալ պահանջները՝ շինծու գործարքի անվավերության հետևանքները կիրառելու և վերջնահաշվարկ կատարելուն պարտավորեցնելու մասին, ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա պակաս վճարված վարձատրության գումարների և տոկոսների բռնագանձման մասին, չվճարված աշխատավարձի, վերջնահաշվարկի և դրա նկատմամբ հաշվարկված տույժը բռնագանձելու մասին:

ԵՂ/22484/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203958540, ԱԸԴ1/4667/02/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786171895, ԵՂ/7789/02/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203927547, ԵՂ/36304/02/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203984140

^{ix} ԵՂ/36304/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203984140

^x Նշված 8 գործը վերաբերել են շաբաթ օրերին առանց վարձատրության աշխատելուն, չօգտագործված արձակուրդի հատուցմանը, տուժանք, հարկադիր պարապուրդի գումարի վրա հաշվարկված տուժանքի գանձմանը, չվճարված աշխատավարձի գանձմանը:

^{xi} ՎՂ/4022/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934143

^{xii} ՎՂ/2805/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932804

^{xiii} ՎՂ1/0079/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935621

^{xiv} Այս խումբ գործերը վերաբերել են վերակազմավորման արդյունքում հաստիքի կրճատմանը, ազատման հրամանն անվավեր ճանաչելուց հետո ոստիկանությունում նախկին պաշտոնում վերականգնելուն, կադրերի ռեզերվ ուղարկելուց հետո համարժեք այլ պաշտոնի չնշանակելուն, վարչական պաշտոնից ղեկավարի հայեցողությամբ ազատմանը: ՎՂ/3774/05/20,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809946308, ՎՂ/2382/05/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932378, ՎՂ/1278/05/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931186, ՎՂ6/0060/05/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936372, ՎՂ/2518/05/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932551, ՎՂ/6331/05/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936617, ՎՂ/3236/05/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933252, ՎՂ/2985/05/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932982, ՎՂ/6487/05/19,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936782

^{xv} ՎՂ/3236/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933252

xvi ՎՂ/0929/05/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943124, ՎՂ/7004/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937328, ՎՂ/11076/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941636, ՎՂ/2313/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932301, ՎՂ/8446/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938888, ՎՂ6/0142/05/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809947340, ՎՂ/7108/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937447

xvii ՎՂ/7077/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937406, ՎՂ/0139/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929924, ՎՂ5/0134/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937298

xviii ԱՂՂ1/5004/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786173061; ՎՂ/0087/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929850; ՎՂ/5626/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935864

xix ՎՂ/2346/05/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809944678

xx Տե՛ս, օրինակ, ԱՂՂ1/0370/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786157957; ԵՂ/30081/02/20, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204074654; ԵՂ/24905/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203962438

xxi Տե՛ս, օրինակ, ՎՂ/3387/05/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809945878 ՎՂ/5648/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935843

xxii Տե՛ս, օրինակ, ՎՂ/7113/05/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809949980, ՎՂ5/0082/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933094

xxiii Տե՛ս, օրինակ, ԵՂ/6992/02/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204017841

xxiv ԵՂ/22366/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203958558

xxv ԵՂ/22484/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203958540

xxvi ԱՂՂ1/0370/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786157957

xxvii ԵՂ/24905/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203962438

xxviii ԵՂ/30081/02/20, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204074654

xxix ԵՂ/8476/02/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203929502

xxx ՎՂ/0929/05/20, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809943124

xxxi ՎՂ/7004/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937328